ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 286-Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ԹԻՎ 126-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «բ», 13-րդ հոդվածի «ա» կետերի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 19-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել՝

1) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

2) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային պլանը՝ համաձայն հավելված 3-ի:

3. Մարզի համայնքների և զորահավաքային առաջադրանք ունեցող (ռազմական դրության ժամանակ գործունեությունը շարունակող) կազմակերպությունների ղեկավարներին՝

1) համայնքներում և կազմակերպություններում ստեղծել արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովներ.

2) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների փաստաթղթերը մշակելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N 967-Ա հրամանով:

4. Մարզի տնտեսության օբյեկտների գործունեության ապահովման միջոցառումների իրականացման վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Տավուշի մարզային փրկարարական վարչությանը:

5. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանին:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի հունիսի 8-ի «Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի տնտեսության օբեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի կազմը, հանձնաժողովի կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանը հաստատելու մասին» թիվ 126-Ա որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

17.10.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ք. Իջևան
17 հոկտեմբերի 2022թ.